ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար լազերային տպիչների, ձայնագրառման համակարգերի և սեղանի համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «17» մայիսի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝
Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝
Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի պարտականությունները ժամանակավորապես կատարող, համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ
Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ
Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝
Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Նիստից բացակայում էր՝
Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 16-րդ օրվա (13.05.2022թ.)՝ ժամը 10:00-ն.
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 16.05.2022թ.՝ ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման հայտով սահմանված է, որ 1-ին, 2-րդ և 3-րդ

չափաբաժինների մասով ընթացակարգը կազմակերպելու կամ դրան նախորդող տարվա ընթացքում նմանատիպ ապրանքների ձեռքբերման նպատակով կնքված պայմանագիր(ներ) (գործարք) առկա չէ:

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն
ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/2
ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	ք. Երևան, Չարենց փ. 37
ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	Ավան, Հ. Հովհաննիսյան 24/7
Էյչ Գրուպ ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Բաշինջաղյան 1 փ, 13/30

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/24» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
			Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	
1	Լազերային տպիչներ	ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ	92812500	20%	111375000	92812500	20%	111375000.00	
1		ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	141256500	20%	169507800	141256500	20%	169507800.00	
1		ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	150000000	20%	180000000	150000000	20%	180000000.00	
2	Ձայնագրառման համակարգեր	ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	300000000	20%	360000000	300000000	20%	360000000.00	
2		ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	331500000	20%	397800000	331500000	20%	397800000.00	
3	Սեղանի համակարգիչներ	ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ	280728250	20%	336873900	230000000	20%	276000000.00	
3		Էյչ Գրուպ ՍՊԸ	301262500	20%	361515000	263189850	20%	315827820.00	
3		ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ	300000000	20%	360000000	300000000	20%	360000000.00	

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 16.05.2022թ.՝ ժամը 10:30-ին և

- 1-ին չափաբաժնի մասով ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից,
- 2-րդ չափաբաժնի մասով ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ ՍՊԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից,
- 3-րդ չափաբաժնի մասով ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2022թ. մայիսի 18-ին՝ ժամը 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան